

## ԿՐՕՆԱԿԱՆ

### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՏԵՍԻԼԸ

Անցեալ ընդ Միւսիա իջին ի Տրուադա և տեսիլ երևեցաւ ի գիշերի Պաւղոսի. այր ոմն Մակեդոնացի կայր, աղայէր զնա և ասէր. անցեալ ի Մակեդոնիա օգնեսցես մեզ: Եւ իբրև զտեսիլն ետես, վազվազակի խնդրեցաք իջանել ի Մակեդոնիա, տեղեկացեալ թէ հրաւիրեաց զմեզ Տէր աւետարանել նոցա: (Գործ. ԽԶ. 9—10),

Ձեմ կարող առանց ներքին յուզման ներկայացնել ինձ այն բոլորէն, երբ Պօղոս Առաքեալը գալով Տրուադայի ծովափը, կանգնում է Եւրոպայի դիմացն և առաջին անգամ տեսնում է աղօտ հեռաւորութեան մէջ նորա ասիերի գծագրութիւնը Հելլէսպոնտոսի կապտագոյն ալիքների վրայով: Երկիրն, ուր գտանուում է Տրուադա քաղաքն, աշխարհիս ամենագեղեցիկ անկիւններից մէկն է. ի զուր չէր, որ հին բանաստեղծութիւնն իւր դիւցազների և աստուածների սիրագործութեանց ասպարէզ ընտրել էր այս ծովափերի փայլուն երկիրքն ու ճոխ բնութիւնը: Բայց այս չէ մեծ Առաքեալի միտքը զբողոքնուր՝ նորա մտածմունքները, նորա ձգտումները, բոլոր նորա կեանքն այլ նպատակի են նուիրուած: Ի՞նչ էր զգում նա, հեռուում Եւրոպայի ասիերը տեսնելով: Դեռ իւր եռանդուն առաքելական գործունէութեան սկզբում նա անցել էր բոլոր արեւմտեան Ասիան, Քրիստոսի վարդապետութիւնը քարոզելով. կարծես նրան յօգնեցրած պիտի լինէին այն վտանգներն, որոնց ենթարկուել էր այն աշխատանքներն, որոց ծանր բեռը նա իւր վերայ կրում էր. ուրիշը հազիւ թէ կարող լինէր կրել հոգւոր բեռն այնքան հազարաւոր հոգիների, որոնց նա դարձրել էր առ կենդանի Աստուածը: Բայց նորա գործունէութեան շրջանի ընդարձակուելուն հետ, ընդլայնուում է և նորա սիրաւ. վտան-

գի մեծանալու հետ զօրանում է և նորա եռանդը: Նորա առաջևն է Եւրոպան, սա քաշում է նրան դէպի ինքը, նորա ոտի մօտ ծփուող ու տարածող ծովի միւս կողմում նա տեսնում է Յունաստանն իւր արհեստներով և աստուածներով, որոնք աշխարհը գայթակղել էին. նա տեսնում է Հռովմը, համաշխարհական մայրաքաղաքը, նորա առաջ խոնարհած, ծունր իջած ազգերով. նա այն ընդարձակ տարածութեան վերայ գըցում է իւր հայեացքն, որ բոցալառուում էր առաքելոյ սուրբ փառասիրութեամբ, նա իւր մէջ կարծես փայլիայում էր այն անսովոր, ըստ երեւութին անմիտ, ցնորքը՝ այն է, ամեն ինչ Յիսուսի և Քրիստոսի իշխանութեան ենթարկել:

Եւ ահա Ս. գիրքն ասում է, որ գիշերը Ս. Պաւղոս տեսնում է երազ. նորա առաջ ներկայանում է մի մարդ, որ կոչում է նրան, «անցիր ծովն և եկ մեզ փրկելու»: Այսպիսի տեսիլով պատասխանեց Տէրն առաքելալի ազօթքին և նորա սրտի ջերմ ցանկութիւնը դրական առաքելութեան փոխեց: «Ե՛կ ազատիր մեզ»: այս բոլոր հին աշխարհի յուսահատական, անյոյս հառաչանքն էր. այս ճոխ և գեղեցկապէս զարգացած լուսաւորութեան ձայնն էր: Այնքան բազմիմաստներ, այնքան փիլիսոփայք, այնքան վիճաբանութիւնք և հետազօտութիւնք, այնքան օրէնքներ և վարչութիւնք, այնքան հանճարաւոր ատենաբաններ և մատենագիրներ — և ի՞նչ էր հետեանքը. այս ամենը վերջ ի վերջոյ հասցրեց միմիայն ազազակի և գոչման — ե՛կ ազատիր մեզ: Ե՛կ ազատիր մեզ, որովհետեւ մեզ տանջում է երկբայութիւնն, որովհետեւ բազբը տարուբերեց մեզ մարդկային մտաց ամեն ալիքների վերայ և վերջապէս անվերջ անհաւատութեան ծունծալի վերայ գցեց: Ե՛կ մեզ փրկելու, որովհետեւ զեղիսութիւնը կրծում է, լափում է մեզ, մինչև սակրներիս ծուծը վարակել է նա, որովհետեւ մեր ապականութիւնը հակառակ է բնութեան: Ե՛կ մեզ փրկելու, որովհետեւ մենք ամենքս էլ ստրուկ ենք, որոնք սողում ենք ափսոսի անձանց ոտների տակ, որպիսիք են Վալիգուլան և Ներոնը: Ե՛կ մեզ մօտ, լիսան զի մեր աստուածները մեռած են, մեր տաճարները

մնջացած և մեր քուրմերն իրանք ծագրուած են իրանց տղութք-  
ներն ու զոհերը: Ե՛կ, որովհետև մենք տանջուում ենք և  
մեզ չիք յոյս ոչ մի տեղից: Եւ ահա Առաքեալը հետեւում է այս հրաւերին: Այն ժողի  
վրայով, որով նա պէտք է նաւէր, շատ աշխարհակաշներ անց  
էին կացրել իրանց հզօր բանակները: Այս ճանապարհով ան-  
ցան Բսերքսէս, Աղեքսանդր և Կեսար, նոցա սարսափելի բա-  
նակներն իւրեանց ծածանուող դրօշակներով և անթիւ բռնա-  
կիր սայլերով տեսնող ամեն մարդ ասում էր: Աշխարհը փոխում  
է իւր իշխողին: Իսկ այժմ երբ փոքրիկ նաւը սրբնթացութեամբ  
մի ափից միւսը տեղափոխում էր չորս տնձանց՝ Պօղոս Տարսու-  
նացուն, Լուկասին, Եփղային և Տիմոթէոսին, անապահոյս ոչ  
ոք նոցա վերայ ուշադրութիւն չդարձրեց, մինչդեռ այդ մար-  
դիկ գնում էին կանգնելու անխախտելի պետութիւն և մինք  
միայն, այն ազգերի սերունդներս, որոնց նոքա բերում էին  
կենաց խօսքը, շնորհաւորում ենք և օրհնում նոցա զա-  
լուսար:

Թող առաքելոց ժամանակի պատմութեան այս մեծ և նշա-  
նաւոր էջն այսօր մեզ խրատ լինի: Այն՝ ինչ որ պատահեցաւ  
Տրոյադայում, պատահում էր ամեն ժամանակ առաքելական  
եկեղեցու մէջ և մինչև ցայսօր էլ իւրաքանչիւր քրիստոնէի  
կեանքում: Մենք բոլոր քրիստոնէայքս պէտք է լսած լինէինք  
մարդկային թէ նիւթական և թէ հոգևոր վիշտերի հառա-  
չանքներն և այդ վիշտերը կոչում են միզ և օգնութիւն խրնդ-  
րում, բայց հասկացել ենք տրդեօք այդ հառաչանքներն և  
կատարել հնք այն, առ որ նոքա մեզ կանչում են: Ահա հէնց  
այս մասին ես կամեռում եմ այսօր ձեզ հետ խօսել:

Եթէ Պաւղոսն, երբեմն աղանդաւոր փարիսեցի, զգածուե-  
ցաւ հին աշխարհի վշտերի հառաչանքից, դա նրանիցն էր, որ  
Պօղոսը Յիսուսի Քրիստոսի առաքեալ դարձաւ, որ նա ճառա-  
յում էր նրան, որ աւաջինը տանջուող մարդկութեան ախուր  
տեսարանը տեսաւ և իրան մատնեց նորա փրկութեան համար:  
Պաւղոս տեսնում է Յիսուսի Քրիստոսի մէջ թաղաւոր, բայց

ինչո՞ւմն է Նորա թագաւորական արժանեաց ընաւորիչ գիծը: Քրիստոսի արքայական իշխանութիւնը սիրոյ և զոհաբերութեան իշխանութիւնն է: Նրանից առաջ և Նրանից յետոյ ով միայն ձգտում էր ստանալու թագաւորական թագ, ասում էր «ես կը արձրանամ»: Նա միայն ասում էր «ես կըստանամ»: Միւսներն ասում էին «մենք կ'իշխենք», Նա միայն ասում էր, «ես կ'ծառայեմ»: Նա միայն իւր հայեացքը գցեց նորա վերայ, ինչ որ Նրանից ցածր էր, Նա միայն լսեց մեղաւոր մարդկութեան օղբն ու կոծը և իջաւ մեր վիշտերի և մեղաց անբռնդի յատակը:

Որպիսի էր վարդապետը, նոյնպիսի և աշակերտներն են: Մինչդեռ մենք սովորաբար գրաւուում ենք նրանով, ինչ որ մեզնից բարձր է ամեն բանով, որ փայփայում է մեր փառասիրութիւնն ու հպարտութիւնը, Յիսուս Քրիստոս ձգտում է ուղղելու մեր ուշքն ու միտքը նոցա վերայ, որոնք մեզնից ցածր են: Նա չէր խօսում երկրաւոր թագաւորների վերայ կամ նոցա վերայ, որոց համբաւը բարձրաբար առ լսուում էր ամենուրեք (և ինչպէս իրատական է այս լուսութիւնը), այլ Նա անդադար յիշում էր նրանց, որոնց վերայ մինչև ցայժմ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում և աշխատում էր այսպիսեաց վերայ կենդրոնացնել իւր աշակերտների հոգացողութիւնն ու սէրը: Ահրջին օրն, ահեղ դատաստանի օրը, Նա իւրը կ'ճանաչէ և իւր փառաց մասնակից կանէ նրանց, որոնք այցելել են և օգնել աշխարհիս փոքրներին: Նա ինքն է իրան սոցա տեղը դնում և այսպէս ասենք, դառնում է ամեն ժամանակ նոցա ներկայացուցիչն: ով նրանց պաշտպանում է, Նրան է պաշտպանում, Նրան է սիրում: Որպէս զի աւելի պարզ և հասկանալի կերպով ցոյց տայ իւր աշակերտներին, թէ ինչպէս սոքա պէտք է ծառայեն մերձաւորներին, Քրիստոս խորհրդաւոր ընթրիքի ժամանակ ստան ձնում է վերջին ստրկի պաշտօնը, արկանում է ղենջակ և լուանում է առաքելոց ստրկերն, ասելով, «ինչ որ ես ձեզ արի՛ դուք էլ նոյնը գործեցէք»: Նորա վարդապետութեան մէջ այս միտքն ամեն ուրեք երևում է, բայց իմ հա-

յեցուածքով նա մանուշակաւ աւելի պարզ աչքի է ընկնում մի առակի մէջ, որ ամենից քիչ մեկնութեան և բացատրութեան առարկայ է դառնում, գուցէ այն պատճառով, որ մարդիկ ակամայ երկնում են նորա մտքից՝ բովանդակութիւնից, որ անխնայ և խստիւ դատապարտում է մեր ինքնասիրութիւնը։ Երբ հացկերոյթ կամ ընթրիք ես կազմում, մի հրաւիրիւ քո բարեկամներիդ, քո եղբայրներիդ, ոչ քո ազգականներիդ և ոչ էլ հարուստ դրացիներիդ, որպէս զի նոքա էլ քեզ չհրաւիրեն և քո վարձը ստացած լինիս։ Այլ երբ ինձոյք ես կազմում, հրաւիրիւ աղքատներին, կաղերին, կոյրերին և երանելի կլինիս, որ նոքա չեն կարող քեզ վարձատրել։ Այս առակի մէջ ինչպէս գեղեցիկ կերպով պատկերացրած է այն եղանակն, որով կրօնը, համաձայն նորա քարոզողի ոգւոյն, պէտք է ազդէ հասարակութեան վերայ և նորան կերպարանափոխէ։ Ընդունենք իրօք, որ այդ եղանակն ամենքն էլ հասկացել են և ամենուրիք տարածուած է նա աշխարհիս երեսին, այն ժամանակ ինչ կոտենենք։ Ամեն բնական կամ ստացական առաւելութիւն—հարստութիւն, իշխանութիւն, գիտութիւն, քանքար, հանձար — մարդուս վերայ պարտք կոչէր ծառայելու նրանց, որոնք նրանից ցածր են։ Այն ոյժերն, որոնք մեզքը յաճախ իւր ձեռքին բռնութեան և հպարտութեան զէնք է արած, կդառնային գործիք անընդհատ հոգևոր ընդաճման և ամենքի ազատութեան։ Բարձրում եղողները կօգնէին ստորներին բարձրանալու դէպի լոյս և դէպի բարոյական ճշմարիտ ազատութիւնը, ֆոխանակ այն չնչին ողորմութեան, որ գցում ենք շտապով մարդկային աղքատութեան գանձանակը, փոխանակ որոշեալ բարեգործութեանց, որ ստիպում է անել անանգորթ խիղճը, մեզ յատուկ կլինէր անընդհատ ձգտումն, որ մեր սրտերը անդիմադրելի կերպով կգարձնէր դէպի աղքատութիւնն ու տանջանքները նոյնպէս բնականաբար, ինչպէս ելեքտրականութիւնը մագնիսացած սլաքը դարձնում է դէպի բեւեռային աստղը։ Այն ժամանակ բոլոր քաղաքակրթեալ քրիստոնեայ ազգերը, փոխանակ իրանց առաւելութիւնքն իրրև

զէնք աշխարհակալութեան գործ գնիլու, օգնութեան ձեռք կրկարկառէին բարբարոսութեան և հեթանոսութեան ստորին աստիճանի վերայ գոտանուող ազգերին և կասէին նրանց առակի խօսքերով «եկէք և մեզ հետ միասին նստեցէք»: Այն ժամանակ ուսումնականք, փոխանակ ամբարտաւանութեամբ մերձեցալու ամբոխին, որոյ մէջ ոմանք գիտութեան անկողմնասիրութիւնն են տեսնում, կասէին տգէտներին. «դուք ևս խոնարհեցէք գիտութեան աղբիւրի մօտ, թող ձեր ծարաւն էլ զօվացնէ նա»: Այն ժամանակ հարուստ կալուածատէրերը, փոխանակ մտածելու, թէ հարստութիւնը տուած է իրանց իբրև աստիճան ինքնասիրութեան կամ բաւարարութիւն տալու համար իրանց պարծենկոտութեան (որ ամենի ինչէ զօրացնում, այլ ընդհակառակը նուազացնում է նոցա նշանակութիւնը) կը հոսկանային, որ Տէրը յանձնում է նրանց իսկական հովանաւորութիւն և իմաստուն հոգադողութիւնը նոցա վերայ, որոնք հանգիստ չունին, որոնք ծանրաբեռնած են ամենօրեայ հոգսերով և անընդհատ աշխատանաց բեռնով: Այն, եթէ մենք երեւակայենք, որ հասարակութիւնն այս հոգւով ներշնչուած է և նորա անընդհատ և զօրեղ ազդեցութեան ներքոյ ծաւալում է լոյս, կիանք և կատարելագործութիւն մարդկութեան ամենախուլ անկիւններն, այն ժամանակ կարելի է յուսալ, որ մենք կյալթենք, առանց բուռն զօրութեան օգնութեան, թէ անպայման հաւասարութեան վայրենի տեսութեան և թէ դասակարգերի մէջ եղած ատելութեան, որոյ մասին շատ յաճախ ես վշտով և ցաւով սրտի յիշում եմ, որովհետև նոքա իտպառակութիւնք են մեր փառաւոր քաղաքակրթութեան համար:

Բայց ամենից առաջ ի՞նչ է կարևոր, որ այդ ամենն իրագործուի: Հարկաւոր է, որ քրիստոնէական սէրը տիրէ մեր սրտերին. անհրաժեշտ է, որ մենք կերպարանափոխուինք Վարդապետի ոգւոյ ազդեցութեամբ և ուսանենք նրանից մերձեցալու ոչ թէ նրան, որ մեզնից բարձր է, այլ նրան որ մեզնից ստոր է, անհրաժեշտ է որ մենք նման սուրբ Պաւղոսի մեր ե-

բազմերո՞ւմ տեսնենք նրանց, որոնք տանջուողւմ են և կորնչուողւմ և նորա նման լսենք նոցա վշտալի հառաչանքներն ու ազազակները զգնութեան համար:

Ես գծագրեցի այս տեղ իրեջի գաղափարական վիճակը: տեսնենք որքան սրան համապատասխանու՞մ է իրականութիւնը:

Արդեօք չէ՞ պատահել ձեզ երբեմն երբեմն ցուօք սրտի նայել երկրագնդիս աշխարհագրական քարտէսի վերայ, ուր քրիստոնեայ ազգերի բնակած երկիրներն այնպէս նեղ են և փոքր: Ես գիտեմ, որ մեծ և գիւցազնական գործեր կատարած են մանաւանդ մեր դարի քարագիշներն, երբ քրիստոնէութիւնն վերջապէս յիշեց, որ նորա երկրիս երեսին գոյութեան նպատակն է բոլոր աշխարհն Աստուծոյ իշխանութեան ենթարկել: Ես գիտեմ ձափոնիայում, ձենագոտանում, Տիբետում, Գօլինեզիայում և Աֆրիկայում կատարուած անձնանութիւնն և բոլոր սխրագործութիւնքն, ես գիտեմ, թէ որքան տրիւն է թափած այն տեղ Աւետարանի համար, ես գիտեմ, թէ որքան մահացել էլ աւելի դառն համբերութիւն, ծանր զոհեր, սարսափելի տանջանքներ, միայնութիւն և յուսահատութիւն է պահանջու՞մ քարոզչութիւնն այս երկիրներում: Ես գիտեմ և այն թէ ինչ հետեանք է ունեցել այդ քարոզչութիւնն, ես գիտեմ, որ Ասիան և Աֆրիկան, կարծես, պաշարուած են քարոզչական իջևանների շղթայով և որ այս պաշարման և փոստագի վիճակի համար միշտ գոտանու՞ում են զինուորներ: Ես գիտեմ, թէ քանի քանի նոր եկեղեցիք շինած են այդ երկիրներում, եկեղեցիք, որոնք աւելու՞մ են Քրիստոսի արքայութիւնը մինչև ցայժմ կապալառական լեզուներով և երախտագիտութեամբ նախատեսանու՞մ եմ ապագայ առատ հումքը: Ես այց մի թէ նախող են մեզ անգործացնել այս հեռուանքները: Մի թէ այս բաւական է, մի թէ ձեզ չէ թու՞ում, որ հեթանոս աշխարհը էլի դառնում է դէպի քրիստոնեայ աշխարհն և գոչում: Ենկ ինձ աղաատելու: Ես գիտեմ, որ այս քաղաքում Վիկտորիայի մենք տեսնու՞մ ենք եւրոպան և Ամերիկան, ուր լուսաւորու՞մ է քրիստոնէութեան լոյսը: Իսկ միւս կողմից

բոլոր մնացած աշխարհն, ընկղմած հեթանոսութեան խաւարի մէջ, մի կողմում — քաղաքակիրթութիւն, իւր բոլոր կատարելագործութիւններով, գիտութիւններով, յարմարութիւններով և ճսխութեամբ, իսկ միւս կողմում — վայրենի, խիստ և անզուսպ, բայց երկչոտ բռնութիւն և ժողովրդական թշուառութիւնք, որպիսիք են զարհուրելի սովի տարիք, որոնք կանոնաւորապէս այցելում են Հնդկաստանին և Պարսկաստանին: Ահա այս հրէշային անհասարկութիւնն արդեօք չպիտի՞ անհետանայ տարիից տարի: Արդեօք այն յագգերն, որոնք վայելում են բարձր կենաց լոյսն ու քրմութիւնը, չպէ՞տք է իրանց ջանքերը միացնեն, որպէս զի մնացած աշխարհներումն էլ ծաւալին որքան հնար է զարգացումն, մարդասիրութիւն և արդարութիւն: Արդեօք բարձր քաղաքակիրթութեամբ ազգերը, յանուն արդարութեան հրամայողական զգացմանց, չպէ՞տք է ստանձնեն պարտականութիւն իտղաղայնելու և անդորրացնելու սուր վիճակում գտանուողներին, նա մանաւանդ որ կըրթեալ ազգերն աւելի յաճախ օգուտ են քաղած իրանց զօրութիւնից և զարգացումից թոյլ ազգերին նեղելու: Հարստահարելու և ճնշելու համար, նա մանաւանդ որ յընթացս ամբողջ դարերի մեր քաղաքականութիւնն եղած է անընդհատ շարք անարգարութեանց: Այո՛, մենք պէտք է այդ ամենը գործէինք՝ բայց Եւրոպայի ազգերն արդեօք այդ են խորհում, դորա վերայ են մտածում: Նորա հսկում յերասպում են միմեանց, լրտեսում են միմեանց, իրանց զինարանները զէնքով լցնելով և ով գիտէ գուցէ հէնց վաղը նոքա յարձակեն իրար վերայ միմեանց ջնջելու համար: Այո՛, նոյն իսկ անձինք, որոնք այսօր հանդիպում են միմեանց իբրև բարեկամներ, որոնք կազմում են դաշնակցութիւնք միեւնոյն աշխատանքը գլուխ բերելու համար, աշխատում են միեւնոյն ուսումնական հետազօտութեանց համար, զուարճանում են արհեստի և քնութեան մի և նոյն գեղեցկութիւններով — և ի՞նչ, հէնց այդ անձինք, որոնք երկրպագում են մի և նոյն Տիրոջ և աղօթում մի Փրկչին, կհանդիպեն երբ և իցէ միմեանց միջպագային կոտորածի

համար Եւրոպայի մի անկիւնում, պատերազմի այն ապագայ գաշտում, ուր գուցէ սպանեն և ձեր սիրելի որդուն: Ահա որպիսի վիճակում մենք գտանուում ենք, ահա ինչպէս են կատարում քաղաքակրթեալ ազգերն իրանց պարտականութիւնը մնացած աշխարհի վերաբերութեամբ:

Դէ՛թ եկեղեցին հասկանար և կատարէր իւր պարտականութիւնը, գէ՛թ նա լսէր աշխարհի կոչելու ձայնն և պատասխանէր սրան: Ես վերեւը յիշեցի այն, ինչ որ նա մեր ներկայ ժամանակում արել է, բայց այդ նման է արդեօք առաքելների ժամանակների հզօր և անհուն եռանդին: Մեր մերձաւորների երկու երրորդ մասը դեռ ևս կռուողաշու է. մի՞թէ այս ամենը գիտենալով արդեօք չէ՞ խոյթուում մեր խիղճը խղճահարութեան փշերով: Կամ մի՞թէ մենք չե՞նք լսել կոչն ու հրաւէրն, որ Պօղոս Առաքելին հանգիստ չտուեց: Ինչո՞ւ եմ ես հեթանոսների վերայ խօսում: Բաւական է, որ այցելենք մեր քաղաքներն և նայենք այն անհոգ, անտոյի ամբօխի վերայ, ուր անկարելի է մի քայլ անել առանց յանցանքի և արատի և կամ ընդհանրապէս բարոյական անկման հանդիպելու իւր կոպիտ կամ ճոխ ձեւերով, բաւական է յիշել միայն թէ որպիսի անմիտ անասունաձութիւն թագնուած է բազմաթիւ մարդոց սրտերի խորքում և որպիսի յուսահատական և անյոյս վիշտ սիրում նրանց, որպէս զի պարզուի, որ եկեղեցին անդորր խղճով չէ կարող ասել. «Տէր, ես կատարել եմ գործն, որ ինձ վերայ Դու գրել ես»: Ինչպէս չվշտանանք և չցաւենք մտածելով այնքան ապարդիւն վէճերի և ներքին երկպառակութեանց վերայ, որոնք զուր խլում են մեզնից այնքան շատ միջոց և ժամանակ: Այս վէճերի համար միշտ կգտնուեն առիթներ—բաւական է մի որևէ դէպք և խօլոյն երկպառակութիւնը կտրբաքուի և ու չգիտէ, թէ նա որպիսի արագութեամբ շրջապատում է բոլոր եկեղեցին: Ինձ կասեն, որ պէտք է պաշտպանել վէճի առարկայ դարձած ճշմարտութիւնը: Ես այդ գիտեմ և ամենեւին դիտաւորութիւն չունիմ ընդ պարտական սիրոյ առ մերձաւորս քարոզել երկչոտ անտարբե-

բուժիչն վերաբերութեամբ յայտնութեան ճշմարտութեանց, որոց վկայ և քարոզիչ մենք պէտք է լինենք, ընդհակառակն, ես կարծում եմ, որ ողորմածութեան առաջին նշանն և ապացոյցն այն է, որ ուսուցանենք մեր ձաւորին ճշմարտութիւն-իսկ եթէ մենք սրան մեղմել և խեղաթիւրել կաշխատենք, գրանսով կոչնչացնենք ողորմածութիւնն իւր իսկ աղբիւրի մէջ: Այն, կպաշտպանենք ճշմարտութիւնը և աւելի ևս, կհաստատենք նրան իւր ամբողջութեամբ այնքան ճշտութեամբ, որքան կարող ենք. բայց և պէտք է թոյլ տանք նրան էլ աւելի յաճախ, քան ինչպէս մենք անում ենք այդ, որ նա ինքն իրան պաշտպանէ: Ամենից առաջ խորին կերպով համազուեմք ճշմարտութեան, հաւատանք նորա յաւիտենական զօրութեան աւելի, քան այն ապացոյցներին, որոնցով մենք նրան հաստատում ենք և հետազօտում նորա խորութիւնն ու հարստութիւնը:

Աշխատենք աւելի սուրբ տաճարի քահանայք և աղօթողք լինելու, քան նորա պահապաններն, աւելի մօտիկ կանգնենք սեղանին քան եկեղեցու գաւթին: Այնքան Աւետարանի փաստաբաններ չլինենք, որքան նորա վկաներ, հետեւենք և հսկենք աւելի մեր հաւատարմութեան առ ճշմարտութիւնն, քան ձգտենք յաղթել մեր հակառակորդներին վիճաբանութեանց մէջ նորա առթիւ: Վիճաբանութեանց մէջ լինում են այնպիսի յաղթութիւնք, որոնց հետեւանքն ոչինչ նշանակութիւն չունի, որովհետեւ նա միտքն անբաւարար է թողնում և խիղճն անհանգիստ: Հաւատոյ ճշմարտութեան ծառայելու համար գործ դնել մեր կիրքերը, զորօրինակ բարկութիւն և ծաղր, ընդհանուրից անձնականի իջնել և վայելել չար զօւարճութիւն, որ պատճառում է մեզ հակառակորդի ստորացումն — այդ կնշանակէ ջուր ծեծել կամ աւազի վերայ տուն կանգնել, մինչև անգամ աւելի վատ, այդ կնշանակէ կոտրել հաւատարմութիւնն և սեւացնել այն գործն, որոյ յաղթութեան մենք ձգտում ենք: Հասկանալի է, որ ես այժիս առաջ չունիմ որեւէ հովուերգական աշխարհ կամ հեզութեան չափազանցութիւն, որոյ դիմակի ներքոյ ծածկուած կլինի մի այլ ինչ, ճարա-

կոյս չկայ, որ առանց պատերազմի անհնարին է վարսելի, բայց նշանաւորն այն է, թէ որպիսի ոգւով մինք նրան կմղենք, արդեօք մեր սրտում սէրն առ Աստուած, առ մերձաւորն և մինչև անգամ առ թշնամին կլինի՞ այնքան զօրեղ, որ անհետացնէ նորա միջից ամեն տնձնական կողմնասիրութիւն, նայենք Պօղոս առաքելի կեանքի վերայ, որ այնպիսի պարզ լոյս է տարածում մեզ զբողոքն ող խնդրի վերայ: Գուք գիտէք թէ որպիսի եռանդով, որպիսի հետեօղականութեամբ և ուժով պաշտպանում էր սուրբն Պօղոս քրիստոնէական ճշմարտութիւնը, բայց տեսէք, թէ որպիսի հաստատութեամբ նա գիտեւէ հրաժարուելու այդ պատերազմից, որպէս զի ձգտի դէպի այն, որ աւելի անհրաժեշտն է, այսինքն մարդոց հոգիք Յիսուս Քրիստոսին ենթարկէ: Յայտնի բան է, Պաւլոսի համար, որ զարգացիլ էր բարբոռնիների դպրոցում և որ խիստ ու կարգապահ աստուածաբան էր, թէ ըստ նորա բնաւորութեան և թէ ըստ դաստիարակութեան շատ մեծ էր հրատարկն ընկնելու կրօնական վիճաբանութեանց թակարդը, թէ կարող էք ներկայացրէք ձեր առաջ նրան, որ ծերացել էր անպատու վիճաբանութեան մէջ բարբոռնիների դէմ և ծախել էր ճարտարախօսութեան և հանճարի գեղեցիկ մարգարիտները նորա համար: Ես գիտեմ, թէ ինչ կպատահէր նորա բնաւորութեամբ մարդուն, միայն շատ կստկածում եմ, թէ մենք կգնահատէինք արդեօք նորա անունն և գործը: Բայց նա ի՞նչ արաւ: Թոյլ տուով երրոյականութեան կատարելապէս լուծուելու դպիրների քննութեանց միջոցով, նա իւր ականջը տուեց հեթանոսների հառաչանաց ձայնին և ստաց հասաւ փամօժակը Յիսոս համար նոր աղբ կաղմելու: Եւ ահա՛ Սաւուղ, Գամաղիէլի աշակերտը, ճշմարիտ փարիսեցին ու բարբոռնին, դարձաւ մեծ և զարմանալի հոգւոյ տէր անձն, որ ընդունակ էր ջերմ սիրով ընդգրկել բոլոր հեթանոսական աշխարհը:

Գուցէ ինձ նկատեն, որ վշտալի հառաչանքն, որ լսեց սուրբն Պաւլոս, անլսելի է մեր շուրջն և որ վերջապէս պէտք է նախ հրաւերն լինի, որ նրան էլ պատասխան տրուի: Իրաւ է, բա-

բայական վշախ ձայնը շատ հազիւ է լսելի լինում: Մարմնաւոր վիշտերը սովորաբար ազապակում են եւ առաջ եւ բարձրաձայն, քան հոգւոր վիշտերն: Բայց միթէ Պօղոս առաքեալի ժամանակ այլապէս էր: Արդեօք չէ՞ք մտածում գուցէ, որ մարդկային խիղճն Եփեսոսում եւ Աթէնքում աւելի օրօրած եւ բխացած էր քան Պարիզում: Զէ՞ք մտածում արդեօք, որ այն ժամանակներն ունայն մարմնաւոր անհոգութիւնն, այնպէս առած, չէր բնական վիճակ մեղաւորների եւ մինչև անգամ յանցաւորների: Զէ՞ք մտածում արդեօք, որ եթէ Ս. Պօղոս ուշադրութիւն դարձնէր հին Յունաստանի միայն արասքին կողմի վերայ, նորա թեթեւամիտ բարուց եւ անընդհատ տօնախմբութեանց վերայ, նա էլի կլսէր այն հառաչանաց ձայնն, որ ստիպեց նրան այնտեղ երթալու: Յայտնի բան է, ո՞չ: Նա լսեց վշախ ազապակն եւ հասկացաւ այն, որովհետև սիրով էր լուսաւորուած: Նա բարձրացրեց Յունաստանի արտաքին փայլուն ծածկոյթն, տեսաւ նորա էութիւնն եւ գտաւ, որ նա տխուր յուսահատական վիճակի մէջ է:

Այսպէս, եղբարք, մի խաբուէք, մարդկային բարոյականութիւնը մեր ժամանակներում փոխուած չէ:

Հակառակ հպարտ պահանջների գիտութեան որոշ զարգացման, որ իբրև թէ մարդու տալիս է հայեցողածքի պարզութիւն եւ հոգւոր հաւատարակչութիւն, ամեն հոգի, որ դեռ բոլորովին ընկղմած չէ զգայական կեանքի մէջ եւ ըստ բանից Ս. Գրոց դեռ չէ դարձել լոկ մարմին, կրում է իւր մէջ անբաւարարութիւն եւ վրդովմունք եւ նորա մէջ դեռ կենդանի են մնացորդներն՝ դժբաղդաբար, յաճախ ողորմելի եւ ալոտած մնացորդներն այն սեղանի, որ գտաւ Պօղոս առաքեալը Աթէնքում. անյայտ Աստուծոյ նուիրուած սեղանի, որ սպասում էր Սուրբ, ճշմարիտ եւ կենդանի Աստուծոյ:

Մինչև ցայժմ ես խօսում էի եկեղեցու վերայ ընդհանրապէս. բայց չկայ ինչ աւելի խաբուսիկ քան ընդհանրացումն խնդրի, եւ այժմ եղբարք, ես կդառնամ ձեզ իւրաքանչիւրիդ առանձնապէս: Յիսուս Քրիստոսով փրկուածներդ, արդեօք

լսում էք դուք ձայներն, որոնք կոչում էին Պաւղոս առաքելին: Արդեօք ձեր տեսիլներում երևում է ձեզ աշխարհն, որ կոչում է հեռի Աստուծմէ:

Ձեր տեսիլները: Այո՛, դուք էլ ունիք տեսիլներ, որոնք հալածում են ձեզ և ամբողջ գիշերներ շարունակ ձեզ հանգիստ չեն տալիս: Բայց դոքա ի՞նչ տեսիլներ են:

Ահա այստեղ ինձ ունկնդիր է մատաղահաս մի աղջիկ, որպիսի՜ հրազներ է նա երողում: Տեսել է արդեօք նա իւր առաջին մարդկային աղքատութեան ստուերներ: Արդեօք մտածել է՞ նա, որ այն ժամանակ, երբ նրա շուրջն ամեն ինչ աշխատում է կատարելու նորա ցանկութիւնքն, սրանց նախատեսներու, նորա կեանքը թեթեւ և ախորժ անելու, այդ ժամանակ այլ աղջկունք աճում էին նեղութեանց, կարիքի և ստորացման մէջ: Ճանաչել է արդեօք նա երբ և իցէ, որ հաւատն, որոյ անարատ հովանաւորութեան ներքոյ խաղաղութեամբ և անգորրութեամբ անցնում էր նորա մանկութիւնը, յաճախ քոլորովին բացակայում է կամ ենթարկուում խիստ ծաղրի ուրիշների դատախարակութեան ժամանակ: Արդեօք նա տանջուել է այս մտքերով, հասկացել, զգացել է արդեօք նա երբ և իցէ պարտականութիւն և երջանկութիւն ծաւալելու այս թշուառութեանց վերայ մի իթարութիւնն, որ վերեւից է գալիս: Երազել է արդեօք նա այն կեանքի վերայ, որ անցնում է անձնանուիրութեան և զոհաբերութեան խիստ, բայց ազնիւ ճանապարհով: Բայց . . . աւելի լաւ է չխօսել դորա վերայ: Նորա ցնորքներն ուղղած են աշխարհիս սխրանաց, սորա ծափահարութեանց և հրապոյրներին: Իւր անուրջներում նա տեսնում է իրան իբրև ճոխ զգեստաւորուած գեղեցկուհի, լսում է զարմանաց հծծանքներ իւր յայտնուելիս: Ո՛հ, եթէ այս շրջութիւնը տեւէր միայն մի օր կամ երկու, ո՞վ մեզանից կհամարձակէր նորա վերայ քար գցել: Բայց եթէ վաղն և երրորդ օրն միևնոյնը կլինի, եթէ ամեն գիշեր նրան կոչում են և տանում այդ տեսիլներն, եթէ բոլոր կեանքը նորա համար միայն աշխարհիս թմրեցուցիչ զուարճութեանց մէջ է կայանում,

որքան էլ աշխարհային հասարակութիւնը չզարմանար նորա վերայ և չշողքորթէր, որքան էլ նորա գովտասանութեանց իրանց հաւանութիւնը տան նոքա, որոնց Աստուած նրան զեկավար է դրած, և որոնք պարտաւոր էին նրան ճշմարտութիւնն ասելու, բայց — Տօ պէտք է նորա աչքերը բանալ . . . բայց նորա հոգւոյ խորքում ինքնասիրութիւն է հանգիստ առնում: Այն, այդ ճոխ արտաքին կերպարանքի տակ ծածկուած է նոյն սառն, չոր ու ցամաք զղուելի եսականութիւնը: Որպիսի զարհուրելի պատասխանատուութիւն է սպասում նրան անհեղ դատաստանի օրն, ինչպէս անխուսափելի է դատաւիճիւն այդ առանց Աստուծոյ և զոհի անցնող կեանքի վերայ:

Այժմ մենք տեսնուք այն յոյժ տարածուած կարծիքն, որոյ հետ հեշտութեամբ համաձայնում են աշխարհային անձինք: Եւ յիրաւի ամենուրեք և միշտ կարելի է լսել, որ իբրև թէ անձնուրացութիւնն ու ողորմածութիւնն անուշադիր կեանքի և տաք բնաւորութեան տէրերի յաւիշտակութեանց հետ ձեռք ձեռքի տուած առաջ են գնում: Այս աւթիւ սիրով առաջ են բերում զարմացման արժանի վարմունքը յայտնի աշխարհիկ կանանց և չարամիտ ուրախութեամբ առաջ են բերում այն կանանց վայելուչ եսականութեան դիմաց, որոնք վարում են ծանրաբարոյ կեանք:

Ես համաձայն եմ, որ յաճախ կարելի է տեսնել յանկարծական անձնուրացութեան և անակնկալ ողորմածութեան օրինակներ այն մարդոց շրջանում, որոնք վարում են թեթեւամիտ, երբեմն և աշկարայ արտաուոր կեանք. ես հասկանում եմ, որ անվիտ կեանքով վրդոված խիղճն ու սիրտը միւս ծայրահեղութեան են դիմում, այն է ողորմածութեան և անձնուրացութեան, որոնք երբեմն հասնում են կատարեալ ճշմարիտ զոհողութեան. չէ՞ որ և սիրտը պէտք է ունենայ մի ապաստանարան, ուր նա կտրուկանար հանգստանալ և անդորրանալ գէթ մի րոպէ: Բայց այս հոգևոր յուզմանց և շարժողութեանց մէջ շատ կայ արդեօք արդարութիւն և հաստատամտութիւն: Կարո՞ղ են արդեօք նոքա անհետացնել հետեւանք-

ներն և քաւել գայթակղու թիւնքն անմտու թեամբ անցկացրած բոլոր կեանքի: որոյ մէջ Աստուած սչ մի նշանակու թիւն ունեցած է: Բացի գրանից, կտրելի՞ է արդեօք միշտ հաւատ շնծայել այդ պիսի հոգեկան բուռն բերմանց մտերմութեան: Մինք ծիծաղում ենք սուտ բարեպաշտութեան և կեղծաւորութեան վերայ: Բայց մի թէ նոյն խարդախութիւնը չկայ և արտաքոյ կրօնական շրջանների, ուր նորա աւելի յաճախ նկատելի են: Մի թէ աշխարհը չունի իւր պաճուճեալ խանդաղատութիւնն, շլացուցիչ առաքինութիւնքն, կեղծաւորութիւնն և ի վերջոյ փարիսեցիութիւնը:

Միայն նորա համար, որ մի թեթեամիտ և ունայնտէր կին մի գեղեցիկ օր կատարել էր մի գործ, որոյ վերայ ճշմարիտ քրիստոնեայ կինը կնայէր իբրև սոլորական երևոյթի վերայ, որ նորա պարտականութեանց շրջանին է պատկանում: դուք կը լսէք գովասանութեանց ամբողջ նուագահասնդէս, որ մինչև երկինք բարձրացնում է այդ ունայնասիրի ողորմածութիւնը: Բայց այս ողորմածութեան բուռն յուզմունքը— սա փոխեց արդեօք նորա կեանքի էութիւնը: Անհետացրեց արդեօք նա այդ էակի կուռքին՝ զուարճասիրութիւնն՝ այսինքն ետակա-նութիւնը, այն է ճշմարիտ սիրոյ մահը:

Ես գիտեմ նոյնպէս, որ կրօնի և կեանքի մէջ ինքնասիրութիւնը շատ լաւ կարող է ասրել խիստ կանոնաւորութեան հետ: Շատ կան բարեկենցաղ, բայց անձնաբացութեան տիրն-գունակ անձինք: Յայտնի կրօնական շրջանները շատ յաճախ ներկայացնում են այդ պիսի օրինակներ: Նորա ունեն իրանց աւանդական առաքինութիւնքն, ամենից աւելի— սէր սու ընտանեկան կեանք և սորա գրած պարտականութեանց կտտա-րումն: այստեղից էլ ծագում է նոցա իրական օտարացումն աղ-մըկալից և անուշադէր կեանքից և որոշ ծանրութիւնը բնաւոր-ութեան: Այս բաւական է համարուում: սրանով զոհ են մնում և որովհետև ճանաչում են այս առաքինութիւնքն իրանց մէջ, որովհետև զգուանք են տածում դէպի հրապոյրները— ամենեւին այքի առաջ չունին, որ նոցա բոլոր կեանքը կենդրոնանում

է անձնական շահերի մէջ, դասակարգական անախառութեան մէջ, սիրոյ մէջ առ յարմարութիւն և հարստութիւն և քրիստոնեայ լինելու ձգտման մէջ, առանց երբէք ոչ անձնուրացութիւն և ոչ էլ զոհաբերութիւն ճանաչելու: Աշխարհային մարդիկ, որոնք անձնատուր են այս աշխարհիս, բոլորը լատենսում են և ծիծաղում են դորա վերայ. բայց ես չեմ ների նրանց այդ չար ուրախութիւնն և կասեմ. գիտէ՞ք արդեօք դուք, թէ ով է յանցաւորն այդ հրէշային թմրութեան մէջ:

Դո՛ւք, այ՛ն դուք, որովհետեւ եթէ դուք անուշադիր կեանքի և գայթակղութեան օրինակ չտայիք — այլք արդար և կանոնաւոր վարքն առանձին արժանաւորութիւն չէին համարիլ: Դո՛ւք էք ցածրացնում բարոյականութեան մտկերւոյթը. դո՛ւք էք պատճառն, որ ամուսնական և մոյրական պարտքը չճանաչող կինն, իրան անարատ է համարում: Նթէ՛նա ձեզ աչքի առաջ ունենար, նա կորսնէր իւր համար բարձր գաղափար և փոխանակ իրան առաքինի համարելու միայն նորա համար, որ ինքն ընկած չէ, նա կնկատէր, որ բնական հակամիտութիւններից բարձր կայ անձնագոհութեան և ողորմածութեան անսահման աշխարհ էլ: Առանց ձեզ նորա ինքնասիրութիւնը ներսլամութեան չէր արժանանալ, նրա ինքնասիրութիւնն ինքն իրանից կվախենար, նա կտարտափէր իւր յանցաւոր անգործունէութիւնից, բայց դուք նրան անգործացնում էք: Զկարծենք, որ աշխարհային կեանքը չէ ոչնչացնում ողորմածութիւնն, իսկապէս նա սորա ամենաչար թշնամին է: Նտխ և առաջ նա խլում է ժամանակը, ապա — միջոցներն և վերջապէս մինչև արմատը դասացնում է սիրոյ և ինքնուզոհութեան ընդունակութիւնը:

Այ՛ն, եթէ դուք անցնում էք թշուարութեան մօտայի, առանց նրան նկատելու, եթէ դուք լսում էք վիշտերի հաւաքանքներն, առանց նոցա վիրայ ուշք դարձնելու, դորա պատճառն այն է, որ աշխարհային կեանքը շլացնում է ձեր աչքերը, քարացնում է ձեր սիրտն և փակում ձեր տկանջները: Եթէ ալքատութիւնը ձեզ ձանձրացնում է, եթէ բարեգործութիւնը ձեզ զրգուում է, դորա պատճառն այն է, որ հպար-

տուժիւնն, դրօսասիրութիւնն և ունայնութիւնն անամօթաբար լափել են նորա մասն ու բոժիկն: Մարդ չպէտք է ինքն իրան խաբէ. եթէ տւեալաբար ճշմարտութիւն է, դորա մէջն է կենաց և փրկութեան խնդիրը — ես կամենում եմ ասել, որ եթէ շարունակէք երթալու այն ճանապարհով, որոյ վերայ կանգնած էք, դուք ձեր հոգին կկորցնէք: Դուք կկորցնէք այն, չնայելով ձեր (արտաքին) ուղղափառութեան, ձեր կանոնաւոր խոստովանութեան և սրտի զեղմանց, որոնք մինչև արտասուք են հասնում, որովհետև Տէրը նայում ու տեսնում է ուղիղ սրտի խորքն, իսկ ձեր սիրտը պատկանում է աշխարհին և ունայնութեան: Ձեր քանձն աշխարհիս վերայ է, հեռու Աստուծոյ և ձեր բոժիկը յաւիտենականութեան մէջ հեռու կլինի նրանից:

Իսկ դու, ով եղբայր, ինչ տեսիլներ են երևում աչքիդ: Երբ դու մտածում ես ապագայի վերայ, ի՞նչ է քեզ գրաւում և յափշտակում: Մտածում ես արդեօք բարի և աստուածաճշոյ գործերի վերայ, որոնք քեզ սպասում են և որոնք գործելու համար գուցէ կոչուած ես: Մտածում ես արդեօք պատրաստութիւնք տեսնելու պատերազմի համար: Մտածում ես արդեօք մաքուր և կամքով զօրանալու, որպէս զի դիմադրես չարին, որպէս զի պատերազմես մարմնոյ և մեղաց բռնութեան դէմ: Մտքով տեսնում ես արդեօք նրանց, որոնց օգնութեան կնուիրես ձեռքերդ ու սիրտդ: Լսում ես արդեօք ձայներն, որոնք գոչում են ինչպէս և Պօղոս տուաբեային՝ եկ մեզ օգնելու. բայց ո՞վ գիտէ գուցէ քո գնորդներդ ուղղած են բոլորովին դէպի այլ ինչ, զորօրինակ դէպի փառք: Գուցէ դու քեզ համար կուռք ես ձուլել գրականական փառքիդ և քո ցնորդդ է — ամենքի կրկնած Մէթանուրը: Կամ գուցէ՞ այս էլ շատ փոքր է քեզ համար դու կամենում ես բոլորովին ընկզմիլ դիտութեան մէջ, սորա ազնիւ յայթութիւններով և մաքուր ուրախութիւններով: Արդեօք քո ցնորդներդ աւելի դէպի այս չե՞ն ձգտում իրօր, Տաղ «նդ», հարստութիւն, դիտութիւն — ընտիր գործիքներ են, եթէ միայն կնուիրուին Աստուծոյ ծառայու-

թեան) մարդկութեան բարօրութեան և զարգացման համար, բայց եթէ նորա շեղուում են այս մեծ նպատակից, դառնում են ինքնանիրութեան գործիքներ, փայլուն կուռքեր, որոնք յափըշտակում են Աստուծոյ միայն Նորան վայել երկրպագութիւնն և սէրը:

Ո՛ւր են ներկայումս այն մարդիկ, որոնք տեսնում են Պօպս Առաքեալի տեսիլը: Ո՛ւր են նորա, որոնց սիրտը զգում է տանջանքն ու թշուառութիւնքն իրանց ժամանակակից սերունդների և որոնք հասկանում են, որ այս տեղ պէտք է դնեն իրանց կեանքը:

Գիտէ՞ք արդեօք թէ ինչպէս են սկսուել մեծ գործերը: Նրեւում էին մարդիկ, որոնք նկատում էին այն, ինչ որ նոցանից առաջ ոչ ոք չէր նկատել: Պաւղոս առաքեալը տեսաւ, որ հին աշխարհը կորնչում է և բերեց սրան Աւետարանը: Պատկալը նկատեց կեղծ բարեպաշտութիւնն, որ կաթոլիկութիւնը դէպի կորուստ էր տանում, և գրեց իւր անմահ գիրքը: Վինսենտ Պօլը նկատեց, որ սրբերին փողոցն են գցում և կատարեց իւր մեծ գործը: Վիլբերֆորսը տեսաւ, որ Սեւերին ծախում են իբրև գրաստ և ստրկութեան առաջն առաւ: Այս բոլոր մարդիկ մի տեսիլ էին տեսնում, որ նրանց հալածում էր, նրանց հանգիստ չէր աւելիս:

Տեսիլք, ասում է աշխարհը և ծաղրում է նրան: Մեզանից ամեն ոք տեսած է այդ ծաղրածուներին: Քրիստոսի ծննդից երկու հազար տարի առաջ մի երիտասարդ հայիւ Աբրահամի ցեղից պատմում էր իւր երազներն եղբայրներին: Նա ապագայի խաւարի մէջ տեսնում էր այն փառքն, որ նորա համար պատրաստած էր, բայց եղբայրները լսում էին նրան արհամարհանաց և ատելութեան ժպիտով և հեռուից նրան տեսնելով ասում էին. «ահա գալիս է երազատեսը»: Այսպէս երբ Տէրն իւր մտտով նշանակում է մի որ և է հոգու մեծ նպատակ կատարելու համար, երբ նա նրան երազ է ուղարկում, որ որոշում է նորա յիճակն և բաց է անում նորա առաջ նորա ապագայ դիրքը—աշխարհը ձիճաղով կրկնում է Յովսէփի եղ-

բարց խօսքերը. «ահա գալիս է երազատեսը»: Եւ երբ Նազարէթում երեւեցաւ մարդն, որ վարդապետում էր Աստուծոյ արքայութիւնն երկրիս երեսին անպայման արդարութեան և ճշմարտութեան մէջ և նախատեսում էր իւր արքայական իշխանութեան աճումն ապագայ դարերում, Նորա ազգականներն իսկ ասում էին. «Բա անմիտ է»: փարիսեցիք դռում էին «գիւհահարեալ է»: և Սկեպտիկեան (երկբայող) Պիղատոսն ուսերն էր վեր քաշում: Ինչ որ Ուսուցչի բաժինն եղաւ, նոյնը մասն ընկաւ և նորա աշակերտներին: Յիշեցէ՛ք Պօղոս աւաքեալին, որ Փետտոսի դատաստանում լսեց այս ծաղրածութիւնը. «Քո մեծ ուսումնականութիւնդ, Պօղոս, քեզ խելքից հանել է»: Երազող, երազատես—այս խօսքերի մէջ է բովանդակուում այս աշխարհիս դատապարտութիւնը, աշխարհիս սրոյ համար ողորմածութիւնը զնորք է և խաչը—յիմարութիւն:

Յնորք) անմտութիւն—մինչդեռ այս պայմանով միայն կ'յաղթէ Աւետարանը. եթէ քրիստոնէական կրօնը մեր ժամանակ չէ համարձակիլ հասնելու մինչև այս սոսնձանները, աշխարհը նրան դէն կ'զցէ, ինչպէս հանգած լապտեր, իբրև ազ, որ իւր զօրութիւնը կորցրել է: Յանձնեցէ՛ք աւետարանը գիտնականներին և նորա հարիւր անգամ կ'կործանեն, կտապալեն նրան, մինչդեռ երազողները հարիւրաւոր անգամներ աղաւտած են նրան և անմիտներն իրանց կեանքը դրած են Նորա համար և գիտեցած են սիրել նրան զինքնալոհօթիւն առանց որևէ շահական հաշուի:

Եղբարք, երբ սուրբն Պաւղոս լսեց Աստուծոյ հրաւերը, Ս. Գիրքը պարզ կերպով ասում է, որ նա գնաց: Թող այս խօսքը լինի մեզ համար վերջին խրատ: Կարելի է տեսնել բարձր տեղիներ, ունենալ ամենազնիւ զգայմունքների զարմանալ քրիստոնէական գաղափարի մեծութեան և որբութեան վերայ—բայց և այնպէս մնալ ողորմելի ինքնատէր, որին Աստուած կ'մերժէ վերջին օրը: Ուրեմն ինչ է հարկաւոր: Պէտք է գնալ—այսինքն պատառել շղթաներն, որոնք կ'ապրում են մեզ ունայնութեան և զգայականութեան ու անպիտանութեան հետ:

պէտք է գնալ դէպի գործ և կատարել այս հաստատութեամբ մինչև վերջը. «Նրանելի էք դուք, սուսայ Տէրն, եթէ այս գիտէք և կատարում էք»: Ամէն.

(Բերեկէց).

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ

• (Մարտի 1-ին և 1-րդ).

Թէ որքան կարևոր են այսպիսի նախակրթութիւնները՝ Կանադայ քերականութիւն սովորեցնելուց առաջ, հեշտ է հասկանալ, եթէ Կեղծութիւն սովորեցնելուց առաջ տեղի ունեցած հին վէճերը հարկանցի յիշատակենք:

Մենք զարմանալի կերպով կարծում ենք, թէ գրաբարի քերականութիւնը կամ օտար լեզուի քերականական վաղ ուսումը (ուսերէնի, ֆրանսերէնի) մի և նոյն օգուտներ կարող է տալ, ինչպէս մեր խօսակցական կենդանի լեզուի միջնորդութեամբ առաջին քայլեր գործելը. սակայն պէտք չէ մոռանալ, թէ մատաղ մտքի համար դժբա շատ տարբեր հրահանգութիւններ են. Երբ որ խօսակցական լեզուի քերականութիւնից ենք սկիզբ առնում, նորա բովանդակութեան զգալի մասը արդէն կանխաւ սովորած ենք լինում գործնական ճանապարհով: Իսկ եթէ զոր օր լատինական քերականութիւն ենք սկսում սովորել, այն տեղ մեզ համար ամենայն ինչ նոր է: Մենք մեր խօսած լեզուով արդէն կարող ենք բաւական վարժութեամբ կարգալ և գրել, դեռ ևս քերականութեան երեսը չը տեսած. իսկ լատինական նախադասութիւն կարգալու համար՝ հէնց սկզբից հարկաւոր է նախ և առաջ քերականութեան տարբերքի ծանօթութիւնն ունենալ:

Միշտ աւելի օգտակար է, որ մի նոր լեզուի կանոնաւոր ուսումը այն հասակում սկսուի, երբ որ մանկան ըմբռնողական կարողութիւնը արդէն լաւ զարգացել է: Այդ ժամանակ լեզուն աւելի շուտ է ձեռք բերվում քերականութեան միջնորդութեամբ: Պատճառը պարզ է: Բերեկէց: